

ԳԵՈՐԳ ԳՐԻԳ

ՅԵՐԿԱԹԻ Յ Ե Ր Գ Ը

891. 99

Գ-89

ՀԱՅ ՊՐՈԼԵՏ-ԳՐՈՂՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՏԻԱ

1925

16 DEC 2011

85
831.99
9-89

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ, ԲՈԼՈՐ ՅԵՐԿԻՐՆԵՐԻ ՄԻԱՑԵՒՔ

ԳԵՈՐԳ ԳՐԻԳ

1004

ՅԵՐԿԱԹԻ ՅԵՐԳԸ



№ 1

1925

ՅԵՐԿԱԹԻ ՅԵՐԳԸ

Ե. Ե. Ե. Բ.

Կանգնել եմ յերջանիկ ազատ
 Ու սիրտս աշխարհին նետում,
 Ամենքին ծանոթ, հարազատ՝
 Կանչում եմ, զուրգուրում, ժպտում:

Աշխարհը մի կանաչ այգի
 Ու սիրտս տերեր նրա,
 Բացվել եմ դալարուն ճյուղին,
 Ու ծաղկած թփերի վրա:

Գգվում եմ հողին ու ջրին,
 Թիթեռին, թռչունին, ուրին.
 Ու փոքրիկ մրջյունը չնչին,
 Յեվ սուրբ ե և թանգ և անգին...

Թե ունեմ, թռչուն եմ դարնան
 Լողում եմ յերկնքի ծովում.
 Ձեմ տենչում հարազատ կայան,
 Ամեն տեղ կայաններ ունեմ...

3 363
 40



Ուր գնամ՝ իմ տունն ե հիմի
Սեղանն ու սիրտը բացած,
Յեղբայրս ու քույրս վաղեմի
Բարի-համբույրի կեցած...

Ձեռքիս հետ սիրտս եմ տալիս
Ապրում եմ նրանց հոգում.
Աշխարհը և՛ լայն և՛ բարի
Ել չունի ցավ ու սոսկում...

Սիրում եմ, զգվում ամենքին,
Գուրգուրում հողին ու ջրին,
Ու փոքրիկ մըջուկն չնչին
Ե՛վ սուրբ ե և՛ թանգ և՛ անգին...

Կ Ո Մ Ի Ն Տ Ե Ր Ն Ի Ն

Պարզել ես թևդ հսկա
Վառել ես սիրտդ բենդին,
Աշխարհի հոգուն հիմա
Բերել ես նոր խոսք անգին:

Սահմաններ, ափեր չունիս,
Կապանքներ, չափեր չունիս,
Աշխարհի հոգու վրա
Փռել ես թևդ հսկա ..

Արևի սրտին շատ մոտ
Յերգում ես, զնգում, շաշում.
Ամենքին մոտիկ, ծանոթ
Արևոտ գիրկդ կանչում:

Աշխարհի ամեն մասում
Կայաններ ունիս կայուն,
Ի վաններ, Զոներ, Խոն-Յուն
Բորբոքված բողոք, ցասում...

Արևի լույսին ծառավ
Հանքերում թաց ու խոնավ
Քամում են յերկաթ ու նավթ,
Կոփում են կամքդ անհաղթ...

Վոր թևդ հաստատ մնա
Ու սիրտդ բարձր կանչի,
Աշխարհը մի սիրտ դառնա,
Միազարկ, մի կերպ հնչի...

Զ Ե Մ Ո - Ա Վ Ջ Ա Լ Ա

Հին, զառամած Մցխեթի դեմ,
Ծեր Մծիբից վոչ հեռու՝
Ուր Արագվան ուրախ, վեա-վեա
Համբուրվում ե Քոի հետ,

ուր ժայռերը յերկու ափի
լուռ կանգնել են դեմ-դեմի,
ու սեղմում են մեջքը ճկուն
իրար փարած գետերի, —

այնտեղ՝ այսոր ջահել, հզոր
կանգնել ե հաղթ մի բանակ,
առած վառոդ, մուրճ ու ֆիթիլ
ու քլունգներ անքանակ...

Յեկել ե նա հազարասիրտ
քաղաքներից, գյուղերից,
յեկել ե հաշտ ձուլված ի մի,
կարծես յելած մի անից...

Աչքերում վառ արևն անմար,
ձեռքերը կոշտ — կայծակից,
սրտում պայծառ դարուն հազար
ծիածանված — արևից...

Ու չոքել ե ջրի ափին,
են ժայռերին ահարկու,
ու քանդում ե, ու փշրում ե
սիրտը նրանց ա՛հ, հուժկու...

Շաղափում ե կուրծքը նրանց
դնում վառոդ ու ֆիթիլ,
դնում սիրտը — հզոր դինամ,
հսկա կամքից — մի կաթիլ...

Ու ձեռում ե շինում, կերտում
գետի համար մի նոր հուն,
ձև ե տալիս, տեմպ ե տալիս
նրա սրտին ու հոգուն...

Տեմպն ե տալիս արև սրտի
ուժը ջրուտ ձեռքերի,
ու շինում լուսեղ, հզոր
հիդրոստանցիան վիթխարի ..

Հիդրոստանցիան... վոր հաղթ մեկնի
իր թևերը կրակոտ,
մի նոր ճամփով շարժի, տանի
կյանքի անիվն աղմկոտ ..

Վոր ուղտերի քաղաքանը
անապատում փոշով լի,
դանդաղ ու ծույլ հորանջոցով
եւ չքայլի, չքայլի...

Վոր հեռածալ ուղիներում,
խրճիթներում գյուղերի,
ամեն մի սիրտ մի նոր ձևով
մի նոր տեմպով բաբախի...

Հեյ, հսկաներ արևադեմ
վառոդի պես պայթուցիկ,
քլունգի պես հատու, փորոզ
կյանքի հիմքը լախաձիգ,

լայն աշխարհում գետեր շատ կան
 ու շատ հուններ փոխելու,
 լայն աշխարհում վառող շատ կա,
 վոր պատրաստ է պայթելու...

Կյանքը, կյանքը յեւած հեղեղ
 հզոր, պղտոր, կատաղի...
 Դէհ, շարժեցեք քլունգները
 տվեք նոր հուն՝ նոր ուղի...

Գ Ն Ա Յ Գ

Հազարանիվ, աղմկաշունչ ու զվարթ
 Հազարասիրտ, հազար լեզու մի տիտան
 Մլանում է գեպի վոսկի հեռաստան,
 Ռազմի շնչով և՛ հաղթական, և՛ հպարտ:

Հազարասիրտ, հազարլեզու մի տիտան.
 Բոցով, ծխով, յերգով, զարկով կրակոտ,
 Յերազում է հեռու-հեռուն աղմկոտ.
 Մլանում է կայարանից—կայարան:

Բոցով, ծխով, յերգով, զարկով կրակոտ,
 Կանչը շուրթին, հուր է շնչում ու շոգի.
 Սիրտը շինած շինած գնդակ շեշտակի,
 Զարկած թխպոտ յերկրի հոգուն հիվանդոտ...

Հազարանիվ աղմկաշունչ ու զվարթ,
 Կյանքը հպարտ մի գնացք է յերկաթե.
 Յես ու դու ել մի անիվը պողպատե
 Աշխարհը լայն մի կայարան անավարտ...

Ն Ա Մ Ա Կ

Խոնավ, ցածրիկ տնակի մեջ,
 լամպի աղոտ լույսի տակ՝
 արցունքն աղի յայտերից կախ
 մայրն է նստած մեն-մենակ...

Կորած վորդուց թուղթ է յեկել,
 գիր է յեկել՝ բարի լուր,
 սրտում ասես լույս է վառվել,
 արև ծագել, նոր մի հուր...

Ու կարդում է, անվերջ կարդում,
 շուռ է տալիս ու լալիս.
 յե՛վ խնդում է յե՛վ ծիծաղում,
 խենթի նման պար գալիս...

— «Նանի, նանի, դարդ մի անի,
 ենք քո կորած խենթ աղեն
 հիմի միլիոն ընկեր ունի,
 խոսքեր ունի հրեղեն...

Ուր վոր գնում հույսն ենք տանում,
լույսն ենք տանում բանվորի,
ուր վոր գնում խինդն ենք տանում
ծիծաղ ու յերգ աշխարհի...

Ընկերներս՝ վողջն ել ճնշված,
վողջն ել բանվոր, գյուղացի.
մի՛ յենք դարձել, իրար ձուլվել
թե հայ, թե թուրք, վրացի.

ու կողք-կողքի, իրար գրկած՝
վորպես յեղբայր հարազատ,
խորտակում ենք որենքը հին
և աշխարհը անազատ...

Նանի, նանի, դարդ մի՛ անի,
շուտով կգա մի նոր օր,
եւ չենք տեսնի վնչ գործատեր,
վնչ եւ կնյազ, թագավոր:

Քիչ եւ, քիչ եւ դուք զիմացեք,
ահա շուտով մենք կգանք.
յեւ աշխարհին մի նոր ուղի,
մի նոր պատկեր, ձե կտանք...

Ու չի միտ ձեր սրտերում
վոչ մի կսկիծ ու կարոտ.
մաճկախ ուրախ առանց «անի — վանի»
կերթա գաշտեր ու արոտ...

Բանվորն ազատ հպարտ ու հաղթ
տեր վաստակին, իր գործին.
քաղցը, հարազատ կնի են վախտ
աշխատանքը իր ձեռքին:

Ու կը փռի յերկրից յերկիր
նոր խնդություն ձեռքը մեր.
Ու կողջունի վողջ աշխարհին
ազատականչ յերգը մեր»...

Խոնավ, ցածիկ անակի մեջ
մայրը նստած մեն մենակ,
արցունքն աղի այտերից կախ,
զիւր ե կարգում լամպի տակ:

Ու կարգում ե, անվերջ կարգում,
շուռ ե տալիս ու լալիս.
յե՛վ խնդում ե յե՛վ ծիծաղում,
խենթի նման պար դալիս...

1920 թ.

Զ Ա Ր Կ, Վ Ա Ր Պ Ե Տ

Վարպետ, մեծ վարպետ, զարկդ հրակուռ
Ի՞նչ ե փշրտում աշխարհի սրտին.
— Արցունքով ներկված շղթաներ ու սուր,
— Արնոտ պալատներ, զահեր փոսկեհուռ...

Վարպետ, մեծ վարպետ, կրակդ վառած,
Մինչ յեբբ բորբոքես, քանի՞ բորբոքես.
— Մինչև բոցերը աստղերը լիզեն,
— Մինչև հրդեհվի աշխարհը հնի...

Վարպետ, մեծ վարպետ, աշխարհի հոգում
Քո հզոր բազկով լինչ պիտի կերտես.
— Մի լուսեղ, կարմիր-սիրուն ապագա,
— Մի նձր, նո՛ր աշխարհ՝ անսուր, անշղթա...

Վարպետ, մեծ վարպետ, զարկդ հրակուռ
Հավետ թող զնգա աշխարհի վրա.
Վարպետ, զարկ, վարպետ, հաստատ ու հզոր,
Սիրտս ել քեզ սալ՝ շիկնած ու բոսոր...

Մ Ր Ր Ի Կ...

Հատված

I

Մբրիկ ե բարձրացել ստեպում
Դարերի մբրիկը կատաղի,
Դարերի ցասումն ե թանձրացել,
Ցասումը՝ վոր ափեր ել չունի.
Փչում ե, շնչում անափոր,
Կանչում ե, ծիծաղում խելագար,
Փռթորկում ծովերն ամենի,
Գետերն ու ջրերը վարար:

Գանդում ե փշրում ճամբքին
Գաղաքներ, ավաններ հնացած,
Մանում ե տներն ամենքի
Մրտերն ու խցերը խլացած:
Ու բոլոր շենքերի դռներին,
Ու բոլոր սրտերում դեռ խխունջ,
Պարզում ե թևը լայնարձակ
Շնչում ե հզոր լիաթոք...
Ստեպում մբրիկն ե բարձրացել
Միլիոն ե միլիոն սրտերի,
Ինձ ու քեզ իր զիրկն առել,
Կապել ե թևերին յերկաթի,
Մբրկված մեր սիրտն ել խելառ,
Թևավոր մեր կամքը արի՝
Աշխարհը մի բուռ ե արել,
Ու ափեր չափեր չունի...
Թռչում ենք, թռչում դեպի վեր
Ճախրում ենք սավառնում անհունում,
Սլանում ել խնդում ել ծաղրում՝
Գետնագամ ձեր հոգին կարևեր...
Դեղնացած ճահիճում աշխարհի
Մի փոքրիկ խխունջ ե ձեր հոգին,
Գաղազած դամփոխ պես անատամ
Կապվել եք ձեր ավեր տան շեմքին...
Տիեզերքի կենարոնում ենք կանգնել
Անհունը մի կապույտ ճանապարհ.
Մեր ուղին անկամուրջ, անտոնել,

Մեր յերթը անկայան անդադար...
 Հարթ ե, հավասար մեր ճամբան,
 Մեր կամքը մեր գազալթն ե հիմա.
 Մեր առաջ աշխարհներ դեռ շատ կան.
 Մեր կողքից «աշխարհներ» անցան...
 Զվում ենք արևելք, արևմուտք,
 Հյուսիսն ու հարավը մեր ափին.
 Ցանցում ենք, կապում իրար
 Միլիոն ու միլիարդ սրտերին...
 Ու միլիոն—միլիարդ սրտերից
 Մի կամք ու մի սիրտ ենք կերտում.
 Հեջասը շնչում ե այստեղ,
 Մենք այնտեղ՝ Մենայի ափերում...
 Ու բոլոր ծայրերին աշխարհի,
 Ու բոլոր սրտերին խելառ,
 Նետում ենք մեր «Մըրիկն» ամենի
 Կանչում ենք՝ վոտքի, վոտքի...

II

Արթնացեք, կանգնեցեք վոտքի
 Ամրակուռ, շարքաշար հպարտ,
 Վառեցեք ջահերը ձեր մաքի,
 Զարկեցեք թմբուկներն անապարտ...
 Փողերը հնչեցեք պղնձե,
 Ահագանգը թող բարձր զընդա
 Թող կանչե, թող ճշա, գոռա
 Թող մեկեն աշխարհը ցնցե

Մեր յերթը մըրկուտ հաղթական...
 Մենք յերկրի արգանդիցն ենք գալիս,
 Դարերի յերկունքն ե մեզ ծնել,
 Դարերի մըրիկն ե հրաշունչ
 Գրանիտե մեր կամքը կերտել,
 Բորբոքված մեր հոգին հիմի
 Յերկրի ուժերով բեղուն,
 Հղի յե կայծակ ու շանթերով
 Հղի յե հրաբուխով հորդուն:
 Ու շուտով, շուտով պիտի
 Աշխարհի բոլոր ծայրերին
 Հազար Եանաներ խոսեն,
 Ու մատենն այրող հրին՝
 Գոսացած վողջ գանգերը հին...
 Ու շուտով, շուտով պիտի
 Լեռները ձեղք-ձեղքվին բոլոր,
 Վոր յերկրի տենդոտ հոգին
 Մեղմանա, հանդարտի կրկին...
 Հեյ, հեռու-հեռու դաշտերի
 Ծփծփուն արտերի յեղբայր,
 Քրախնդ ծովացած բերրի
 Հորդել ե, հեղեղվել վարար.
 Հորերի, հանքերի մեջ այրվող
 Ծխի մեջ, հրի մեջ քրտնաշան,
 Պալատ ու կամարներ կերտող
 Սովի հետ ցավի հետ անբաժան՝
 Այդ դուք եք, այդ դուք եք եսոր,

Աշխարհը բերսերով ցանցել,
 Ձեր ջրուտ բազուկներն են հզոր
 Ձրերն ու յերկիրնքը սանձել..
 Այդ դուք եք, այդ դուք եք ետոր
 Ափերը միմյանց ձուլել,
 Աշխարհներն իրար կապած
 Հավերժի հոգուն զամել...
 Կանգնեցեք հաստատ խնդուն
 Դարերի սանդուխքի կատարին,
 Նայեցեք ձեր անցած հեռուն
 Աշխարհի ծանրացած նժարին...
 Ու տեսեք, հեռու ափերում
 Հեռաձիգ մշուշում գունատ,
 Յեղնում են ամպամած մռայլ,
 Վերսոններ, Գրգոններ հատ-հատ.
 Աչքերում հազար վիտրին,
 Ճակատին ցուցանակ զամած,
 Աշխարհի հոգու շուկային
 Նետում են կառավորներ դիզված...
 Ու տեսեք, տեսեք, տեսեք
 Գլուխները հազցրած ցցի
 Ի վանի, Ջոնի, Ֆրանցի...
 Արթնացեք, կանգնեցեք վոտքի,
 Ձարկեցեք թմբուկներն անպարտ
 Փողերը հնչեցեք պղնձե
 Ահագանգը թող բարձր ճրչա,
 Թող աշխարհը մեկն անցե
 Մեր յերթը մորկոտ, հաղթական...



ՀՀ Ազգային գրադարան



NL0338221

23-884

409.

Главлит № 2153

Тифлис.

Тираж 1000

Ժ. Տ. Գ. Խ. Պոլիգր. Տրեստի 4-րդ սպարան, Պոլշկ. փ. № 3.